ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԲԵՌՆԵՐ ԵՎ ՉՎՆԱՍԱՋԵՐԾՎԱԾ ՏԱՐԱՆԵՐ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 8. Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում ~~Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարության~~ տրանսպորտի բնագավառում քաղաքականությունը մշակող մարմնի լիազորությունները

1. Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում ~~Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը~~ տրանսպորտի բնագավառում քաղաքականությունը մշակող մարմինը՝

1) մշակում և իրականացնում է իր բնագավառում պետական քաղաքականությունը.

2) իր լիազորությունների մասով մշակում է բնագավառը կարգավորող իրավական ակտերի նախագծեր.

~~3) իր լիազորությունների սահմաններում հսկողություն է իրականացնում վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում փոխադրման և անհրաժեշտ փաստաթղթերի համար սահմանված պահանջների կատարման նկատմամբ.~~

4) վտանգավոր բեռներ փոխադրելու համար տալիս է թույլտվություն, իսկ մարդու համար ախտածին՝ 1-ին և 2-րդ խմբերի միկրոօրգանիզմներ փոխադրելու դեպքում՝ նախապես ստանալով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համաձայնությունը.

5) համաձայնեցնում է վտանգավոր բեռներ փոխադրելու երթուղին Հայաստանի Հանրապետության ոստիկանության հետ, եթե երթուղին անցնում է Երևան քաղաքի վարչական տարածքով՝ նաև Երևանի քաղաքապետի հետ.

6) ապահովում է տեղեկությունների փոխանակումը շահագրգիռ գերատեսչությունների և կառույցների միջև.

7) իրականացնում է օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 8.1. Վերահսկողությունը վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում

1. Վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում վերահսկողությունն իրականացնում է տրանսպորտի բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին):

2. Տեսչական մարմնի իրավասություններն են.

1) վտանգավոր բեռների փոխադրումների պայմանների, այդ թվում՝ վտանգավոր բեռների փոխադրումներին վերաբերող աշխատանքների և ծառայությունների չափանիշների, ստանդարտների, նորմերի, կանոնների, պահանջների նկատմամբ պետական վերահսկողության ապահովումը.

2) իր լիազորությունների սահմաններում վտանգավոր բեռների փոխադրումների բնագավառում փոխադրման և անհրաժեշտ փաստաթղթերի համար սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացնում.

3) օրենքով սահմանված այլ լիազորություններ: